ԿԱՆԹԵՂՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

# ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**Թեմա- ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎ**

**Կազմող- Տաթևիկ Սաղաթելյան**

**Խումբ-Պատմություն**

**2023թ.**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ........................................ 3
ԳԼՈՒԽ I ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽՕՐԵԻՆ ՏԻՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ: ՇՈՄՈՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ: ՓԱՐԻԶԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ........................................4
ԳԼՈՒԽ II ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ: ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ........................................12
ԳԼՈՒԽ III ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱԿՏԸ..............................17
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ........................................ 22
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ........................................ 24

**Ներածություն**

Հետազոտական աշխատանքի թեման է <<Վիեննայի վեհաժողովը և միջազգային հարաբերությունների նոր համակարգը>>: 1814-1815թթ. ընթացքում տեղի ունեցած Վիեննայի վեհաժողովը եզակի իրադարձություն էր միջազգային հարաբերությունների պատմության մեջ: Վեհաժողովը, որին հրավիրված էին ավելի քան երկու հարյուր պետություններից ավելի ներկայացուցիչներ, և «մեծ տերությունները», որոնք դարձել էին «դիվանագիտական մարտերի» անմիջական մասնակիցները, և այս ամենն ուղեկցվել է բազմաթիվ զվարճանքներով, ոչ պաշտոնական հանդիպումներով, պարահանդեսներով և թատերական ներկայացումներով: Ավարտելով Նապոլեոնյան մի շարք երկարատև պատերազմներ՝ վեհաժողովը մշակեց պայմանագրերի համակարգ, որը կարգավորում էր միջազգային հարաբերությունները և ապահովում էր նոր սահմաններ Եվրոպայում:

**Թեմայի արդիականությունը.** Վիեննայի վեհաժողովի ուսումնասիրությունը կարևոր իրողություն է սույն շրջանում եվրոպական ուժային քաղաքականությունը հասկանալու համար: Վիեննայի միջազգային հարաբերությունների համակարգի նկատմամբ հետաքրքրությունը մինչ օրս չի թուլացել և կարևոր փաստ է թե արդյոք Վիեննայի համակարգը հնարավորություն է տվել երկար ժամանակ պահպանել կայուն խաղաղությունը Եվրոպայում, և արդյոք այն կարող էր օրինակ ծառայել 21-րդ դարում աշխարհում կայունություն ապահովող համաձայնագրերի համար, որի միջոցով կկանխվեր պատերազմները:

**Նպատակը և խնդիրները.** Աշխատանքը թույլ կտա հասկանալ Ֆրանսիական մեծ հեղափոխությամբ և Նապոլեոնյան պատերազմների ժամանակ վերացված ավատատիրական, միապետական կարգերի վերականգնման, մի շարք տապալված գահատերերի վերահաստատման, պայքարը ազգային-ազատագրական ու հեղափոխական շարժումների դեմ, դաշնակից տերությունների հաղթանակի ամրապնդման, Ֆրանսիայում Նապոլեոնյան վարչակարգի վերականգնումը կանխելու և Եվրոպան Ֆրանսիայի նոր զավթողական պատերազմներից ապահովագրելու ամուր երաշխիքների ստեղծման, հաղթողների տարածքային հավակնությունների բավարարման և Եվրոպայում նոր պետական սահմանների հաստատման ընթացակարգում տեղի ունեցող իրադարձությունները և դրանց հիման վրա պարզաբանել 19-րդ դարի առաջին քառորդում Եվրոպայում համագումարների նշանակությունը եվրոպական երկրների արտաքին քաղաքականության և միջազգային հարաբերությունների համար: Այն լուծելու համար դրված են հետևյալ խնդիրները՝ հասկանալ մասնակից երկրների միջև հակասությունների զարգացումը, ցույց տալ թե ինչպես են արտացոլվել

Ռուսաստանի հարաբերությունները «մեծ տերությունների» հետ, դիտարկել մանևալից երկրների դիրքորոշումները, և վերլուծել դիվանագիտական ներգործության կարևորությունը, ինչը նշանակալից դեր ուներ վեհաժողովի ընթացքում տարածքային խնդիրների պահպանման շուրջ:

## ԳԼՈՒԽ I. ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ՆԱԽՕՐԵԻՆ ՏԻՐՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ: ՇՈՄՈՆԻ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ: ՓԱՐԻԶԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

Համընդհանուր խաղաղության պահպանումը, մշտապես, միջազգային հարաբերությունների կարևորագույն խնդիրն է: Ողջ պատմության ընթացքում այն նշանակալից դեր է խաղացել գրեթե բոլոր հետպատերազմյան խաղաղ կարգավորման գործընթացներում:

Դեռևս Վիեննայի վեհաժողովից առաջ Վեստֆալյան հաշտությունը համարվում էր առաջին ժամանակակից դիվանագիտական համագումարի արդյունքը, որը հիմք էր դրել Եվրոպայի նոր կարգերին: 1648 թվականի հոկտեմբերի 24-ին կնքվեց Վեստֆալյան հաշտության պայմանագիրը, որի նպատակը համընդհանուր խաղաղությունն էր[1]:

Բացի միջպետական վարչատարածքային խնդիրների կարգավորումից՝ Վեստֆալյան հաշտությունն առաջ քաշեց միջպետական հարաբերությունների կարգավորման նոր սկզբունքներ: Սակայն այդ պայմանագրում բացակայում էր մի շատ էական մաս՝ մի մարմին, որը պետք է դառնար համընդհանուր խաղաղության երաշխավոր:

Նապոլեոնն ու իր վարչակազմը ամենուրեք քարոզում էին, թե առաջնորդվում են ազգերի ինքնորոշման իրավունքով: Բայց, իրականում, Նապոլեոնը ցանկանում էր Եվրոպայում հաստատել Ֆրանսիայի գերակայությունը[2]:

Վեստֆալյան հաշտությունը նոր իրողություններ բերեց Եվրոպա, երբ փլուզվեց միասնականության հայեցակարգը, նոր ծագող եվրոպական երկրներին անհրաժեշտ էր մի սկզբունք, որը կարդարացներ իրենց քայլերը և կկարգավորեր հարաբերությունները միմյանց միջև[3]:

Ռիշելյեն տվեց «պետական շահ»[4] հասկացության սահմանումը: Այսուհետ պետությունները շարժվում էին ոչ թե կրոնի թելադրանքով կամ էլ միապետի քմահաճույքով, այլ պետությունների գերակա շահով: Վեստֆալյան հաշտությանը հաջորդած դարի ընթացքում պետական շահի դոկտրինը եվրոպական դիվանագիտության առանցքային սկզբունքը դարձավ[5]: Այն ճանաչեց անկախության, ինքնիշխանության սկզբունքը: Սա նշանակում էր, որ համաձայնագրի յուրաքանչյուր կողմ իր վրա

[1] Манфред А., Наполеон Бонапарт, Сухуми 1989, с. 511-515.
[2] Всемирная история, т. III, М. 1999, с. 28.
[3] История дипломатии, под. Ред. А. Лактынов, М., 2009, с.247
[4] Պետական շահի կոնցեպցիան կարևորագույններիցն է միջազգային հարաբերություններում, որտեղ պետական շահերի ձգտումը ռեալիստական դպրոցի հիմքն է հանդիսանում:
[5] Տե՛ս Եփրեմյան Տ., Վեստֆալյան համակարգը իբրև արդի եվրոպական քաղաքականության շրջադարձային հանգրվան, Երևան, 2015, էջ 37:

պարտավորություն էր վերցնում հարգել մյուս կողմերի տարածքային իրավունքները և չմիջամտել նրանց ներքին գործերին:

Վեստֆալյան հաշտությունից[6] հետո Ֆրանսիան դարձավ ամենահզոր պետությունը մայրցամաքում և հավակնեց Եվրոպայում գերիշխանության:

Վեստֆալյան պայմանագրով Շվեդիան դարձավ եվրոպական քաղաքականության առանցքային դերակատարներից մեկը և հասավ նրան, որ Բալթիկ և Հյուսիսային ծովեր թափվող արևելաեվրոպական գետերի գետաբերանները, որոնցով հացի բեռները Արևելյան եվրոպայից գնում էին Հոլանդիա և Անգլիա, հայտնվեցին նրա ձեռքում:

XVII-րդ դարում Անգլիային մնաց միայն մեկ մրցակից՝ Ֆրանսիան:

Հակասությունները լավագույնս դրսևորվեցին երեք խոշորագույն համաեվրոպական կոնֆլիկտներում.

1. Երեսնամյա պատերազմ (1618-1648թթ.)
2. Իսպանական ժառանգության համար մղվող պատերազմ (1701-1714թթ.)
3. Յոթնամյա պատերազմ (1756-1763թթ.)[7]

Ֆրանսիայի և Անգլիայի միջև ընթացող պայքարում Ֆրանսիան շարունակում էր մնալ մայրցամաքի ամենաուժեղ պետությունը, սակայն շուտով կորցրեց իր ծովային գաղութները՝ Կանադան և Լուիզիանյան: Կայսրությունը դարձավ լոկ աշխարհագրական հասկացություն և նրա տարածքի վրա իբրև քաղաքական միավորներ կային Ավստրիան, Բավարիան, Բրանդենբուրգ՝ ապագա Պրուսիան, Սաքսոնիան և այլ փոքր պետություններ[8]: Այդ քաոսային իրավիճակներում ավելի ուժեղ գտնվեցին Ավստրիան և Պրուսիան: Այս երկու պետությունների միջև երկար ժամանակ պայքար էր գնում միավորել ու Գերմանիան, ինչը հետագայում հաջողվեց Պրուսիային:

1789թ-ի հուլիսի 14-ին Բաստիլի գրավմամբ սկսվեց Ֆրանսիական հեղափոխությունը: Ապստամբները պաշարում ու գրավում են Բաստիլը: Իշխանության գալուց կարճ ժամանակ անց բուրժուազիան ձեռնարկեց նվաճողական պատերազմներ, որոնք հակասում էին հեղափոխության հռչակած «համընդհանուր խաղաղության և ազատության» գաղափարներին[9]: 1804 թվականին Ֆրանսիայի կայսր Նապոլեոն Բոնապարտը հայտարարում է միացյալ Եվրոպայի ստեղծման մասին՝ Ֆրանսիայի գլխավորությամբ: Նա ցանկանում էր դառնալ Արևմուտքի կայսրը[10]:

---

[6] Վեստֆալյան հաշտություն, 1648, կնքվել է Երեսնամյա պատերազմից (1618-1648) հետո:

[7] Յոթնամյա պատերազմ (1756-1763) մի կողմից՝ Ավստրիայի, Ֆրանսիայի, Ռուսաստանի, Իսպանիայի, Սաքսոնիայի, Շվեդիայի մյուս կողմից՝ Պրուսիայի, Մեծ Բրիտանիայի և Պորտուգալիայի միջև:

[8] Եփրեմյան Տ., նշվ. աշխ., էջ 40:

[9] Манфред А.З., Великая Французская революция, М., 1969, стр.32:

[10] https://www.e-reading.life/chapter.php/55854/7/evgeniy-tarle-napoleon.html:

1800-1812թթ Ֆրանսիայի արտաքին քաղաքականության հիմնական նպատակը մի կողմից Անգլիային հաղթելն էր, մյուս կողմից՝ Ռուսաստանի հետ ռազմական, հարձակողական և պաշտպանական դաշինք կնքելը[11]: Պավել I-ը պաշտպանում էր Նապոլեոնի գաղափարները և հույս ուներ ֆրանս-ռուսական բանակի Հնդկաստան ներխուժման պլանի վրա: Մինչ դեռ Եվրոպայի դիվանագիտական շրջանակներում խիստ անհանգստացած էին երկու տերությունների մերձեցմամբ[12]:

1801 թվականի սեպտեմբերի 27-ին ռուսական գահին բարձրացավ Պավել I-ի որդին և Եկատերինա Մեծի թոռ Ալեքսանդր I-ը: 1801 թվականից սկսած Նապոլեոնն խոսում էր ընդհանուր խաղաղության հաստատման մասին, որը պետք է վերջ դներ Նապոլեոնի բռնակցումներին[13]: 1804 թվականի մարտի 21-ին սպանվեց Էնգիենի դուքսը, ով Բուրբոնների թագավորական դինաստիայի անդամ էր, ով մեղադրվեց առաջին հյուպատոսի դեմ դավադրության կազմակերպելու մեջ: Ալեքսանդր I-ը համարձակվեց բողոքի նոտա ուղարկել Ֆրանսիա: Ի պատասխան՝ Նապոլեոնն ու Թալեյրանը մեղադրեցին ռուսական ցարին սպանության մեջ[14]: Այս կտրուկ քայլը ավելի է սրում հարաբերությունները Ալեքսանդր I-ի և Նապոլեոն Բոնապարտի միջև: Նապոլեոնը ցանկանում էր միացնել Պիեմոնտը, ուզում էր միացնել Ջենովան և Լուկան ինչը նա միացնում է, ցանկանում էր իրեն հռչակել Իտալիայի թագավոր և թագադրվել Միլանում, և թագադրվում է, ցանկանում էր մի շարք փոքր գերմանական հողեր տալ իր գերմանական «դաշնակիցներին», այսինքն վասալներին նա տալիս է[15]: 1805 թվականի դեկտեմբերի 2-ին Աուստերլիցի ճակատամարտը Նապոլեոնի վճռական ճակատամարտն էր երրորդ հակաֆրանսիական կոալիցիայի դեմ: Նեապոլի թագավոր Ֆերդինանդ IV-ը և նրա կինը՝ Կարոլինան, չսպասելով ֆրանսիական ներխուժմանը, փախան Սիցիլիա՝ անգլիական նավատորմի պաշտպանության տակ: Նապոլեոնը իր եղբայր Ժոզեֆին նշանակեց Նեապոլի թագավոր[16]:

1806 թվականին ստեղծվեց Հռենոսյան Համադաշնությունը և պաշտոնականացվեց որպես գերմանական 16 նահանգների մաս՝ Նապոլեոնի պրոտեկտորատի ներքո: Ավստրիայի կայսր Ֆրանց II հրաժարվեց սուրբ Հռոմեական կայսրի տիտղոսից,մարշալ Բերտիեն՝ Նևշատելի արքայազն, իսկ արտաքին գործերի նախարար Թալեյրանը՝ Բենևենտի արքայազն, Մարշալ Բերնադոտը՝ արքայազն

[11] История дипломатии/ под ред. В.П.Потемкина. М., Т.II. 1941. С. 123.
[12]https://www.e-reading.life/chapter.php/55854/6/evgeniy-tarle-napoleon.html :
[13] Протопопов А.С. История международных отношений и внешней политики России (1648-2010). М., 2012. С. 253.
[14] Նույն տեղում, էջ 255:
[15] https://www.e-reading.life/chapter.php/55854/6/evgeniy-tarle-napoleon.html:
[16] Лависс Э., Рамбо А., История XIX века. М., Т.I.1938. С. 122.

Հարավային Իտալիայում: Ժոզեֆ Բոնապարտը նշանակվել է Նեապոլի թագավոր, իսկ Լուի Բոնապարտը՝ Հոլանդիայի թագավոր[17]:

Ֆինլանդիայի ճակատում 1807թ. հունիսի 14-ի Նապոլեոնի տարած հաղթանակը վերջնականապես կանխորոշեց Պրուսիայի ճակատագիրը, իսկ Ալեքսանդրը հարկադրված էր վերանայել իր քաղաքականությունը և համաձայնության եզրեր փնտրել Նապոլեոնի հետ[18]: Պրուսիան որպես դաշնակից այլևս գոյություն չուներ, իսկ Անգլիան որևիցե գործնական քայլի չդիմեց: Այդ ժամանակ Ռուսաստանը պատերազմի մեջ էր գտնվում Թուրքիայի և Իրանի հետ: Ալեքսանդրի և Նապոլեոնի հանդիպումը տեղի ունեցավ Տիլզիտում[19], Նեման գետի վրա տեղակայված լաստերի վրա: 1807թ. հուլիսի 7-ին կնքվեց ռուս-ֆրանսիական խաղաղության պայմանագիր և երկկողմ պաշտպանական և հարձակողական պայմանագիր: Ալեքսանդրը պարտավորվեց.

1. Ռուսական կայսրության տարածքում ուժի մեջ մտցնել Նապոլեոնի դեկրետն Անգլիայի մայրցամաքային շրջափակման մասին,
2. Պատերազմ հայտարարել Անգլիային,
3. Ճանաչել արևմտյան Եվրոպայում Նապոլեոնի կողմից իրականացրած և ծրագրվող նվաճումները[20]:

Այսպիսով, փոխարենն Ալեքսանդր I ստացավ Նապոլեոնի հավաստիացումը Պրուսիայից Ֆրանսիական զորքերը դուրս բերելու վերաբերյալ: Թուրքիայի հարցում Նապոլեոնը խոստանում էր տարածքների մեծ մասը տալ Ռուսաստանին: Միաժամանակ ստեղծվեցին երկու նոր պետություններ՝ Վեստֆալյան Թագավորությունը և Վարշավայի Հերցոգությունը[21]::

1808թ. աշնանը Նապոլեոնը բանտարկեց իսպանական թագավորական ընտանիքը և սկսեց Իսպանիայի նվաճումը: Նապոլեոն Բոնապարտը Իսպանիայի թագավոր հռչակեց իր եղբորը՝ Ժոզեֆ Բոնապարտին:Ֆրանսիան որոշեց Ռուսաստանի հետ համատեղ հանդես գալ Ավստրիայի դեմ: Երկու կայսրերի հանդիպումը տեղի ունեցավ սեպտեմբերի 27-ին Էրֆուրտքաղաքում[22]:

1808թ. Նապոլեոնը հաղթանակ տարավ Ավստրիայի դեմ և Շենբրունի պայմանգրով զգալի տարածքներ ձեռք բերեց նրանցից: 1808թ ռուս-շվեդական պատերազմի արդյունքում Ռուսաստանին միացան Ֆինլանդիան և Ալանդյան կղզիները[23]:1811թ.

---

[17] Дегоев В.М. Внешняя политика России и международные системы: 1700-1918, М.,2004. С. 246-247.
[18] История дипломатии, под. ред. А. Лактынова, М. 2009, с.411:
[19] Տիլզիտի պայմանագիր 1807թ. հունիսի 13 (25) հունիսի 25 (հուլիսի 7), https://rusidea.org/25070802:
[20] Всемирная история, т. III, М. 1999, с. 28.
[21] Сергеев В., История Европы XIXв., т. II, М., 1925,. с. 125.
[22] История дипломатии, под. Ред. А. Лактынов, М., 2009, с.413.
[23] Молок А., Европа 1794-1815, М. 1949, с. 415:

Նապոլեոնը պարտադրեց Ավստրիային և Պրուսիային ռազմական կոնվենցիա ստորագրել Ֆրանսիայի հետ ընդդեմ Ռուսաստանի[24]:

1807 թվականի սեպտեմբերի 27-ից հոկտեմբերի 14-ը տեղի ունեցավ Էրֆուրտի հանդիպումը: Թալեյրանը գաղտնի հարաբերությունների մեջ մտնելով Ալեքսանդրի հետ «Դու պետք է փրկես Եվրոպան»,- կրկնում էր նա Ալեքսանդրին գաղտնի զրույցների ժամանակ[25]:

1812թ. սկսվեց ռուս-ֆրանսիական պատերազմը: Ալեքսանդրը գտնում էր, որ Նապոլեոնի դեմ պայքարը պետք է հասցնեն մինչև վերջնական հաղթանակի և հաստատեն Ռուսաստանի գերակայությունը Եվրոպայում: Ռուսաստանը սկսեց ակտիվորեն նոր կոալիցիա հավաքագրել Նապոլեոնի դեմ[26]:

1813թ. օգոստոսին Տիլզիտում կնքվեց երկու պայմանագիր ռուս-ավստրիական և ռուս-պրուսական, որոնցով ձևավորվեց նոր հակաֆրանսիական կոալիցիա:

Մետերնիխը 1813թ. համաձայնության գալով Ռուսաստանի և Պրուսիայի ներկայացուցիչների հետ՝ Նապոլեոնին ներկայացնել հետևյալ հաշտության պայմանները.

1. Նապոլեոնը պետք է հրաժարվեր Վարշավայի հերցոգությունից,
2. Պրուսիային պետք է վերադարձվեր Դանցիգը,
3. Ավստրիային՝ Իլլիրիան,
4. Ֆրանսիական զորքերը դուրս պետք է բերվեին Համբուրգ և Լյուբեկ քաղաքներից[27]:

Նապոլեոնը ուժի կանգնեց և նոր մեծ բանակ հավաքեց: Լյուցեռնի և Բաուցենի պարտություններից հետո և դաշնակից զորքերի գլխավոր հրամանատար է նշանակվում ավստրիական ֆելդմարշալ իշխան Կարլ-Ֆիլիպ Շվարցենբերգը: Օգոստոսի 15-ին տեղի ունեցած ճակատամարտը Դրեզդենի մոտ ավարտվեց դաշնակից զորքերի պարտությամբ: Ալեքսանդրը ոչ մի գնով չէր ցանկանում հաշտվել Նապոլեոնի հետ, նույնիսկ Լյուցեռնի, Բաուցենի և Դրեզդենի[28] պարտություններից հետո, սակայն պրուսական կայսրը մտավախություններ ուներ[29]:

Մետեռնիխը որոշեց իր վրա վերցնել «միջնորդի» դերը: 1813 թվականի հունիսին Ավստրիայի ներկայացուցիչները պայմանավորվեցին Ռուսաստանի ներկայացուցիչ Նեսելրոդեի և Պրուսիայի ներկայացուցիչ Հարդենբերգի հետ

---

[24] Тарле Е., Наполеон, М. 1991, с. 11:

[25] История дипломатии/ под ред. В.П.Потемкина. М., Т.II. 1941. С. 129.

[26] Тарсен Э. и др., Европа (от Наполеона до наших дней), М., 1959, с. 106.

[27] История дипломатии, т. I, М. 1941, с. 375:

[28] Նապոլեոն Բոնապարտը 1813թ. մայիսի 2-ին Լյուցեռնի մոտ հաղթանակ տարավ պրուսացիների նկատմամբ և նորից գրավեց Դրեզդենը, իսկ մայիսի 20-ին Բաուցենի մոտ հաղթանակ տարավ: https://licey.net/free/2-srazheniya__izmenivshie_hod_istorii/

[29] История дипломатии, под. Ред. А. Лактынова, էջ 417:

Նապոլեոնին ներկայացնել խաղաղության հետևյալ պայմանները՝

1. Նապոլեոնը հրաժարվում է Վարշավայի դքսությունից:
2. Պրուսիային է վերադարձնում Դանցիգը:
3. Ավստրիային է վերադարձնում Իլլիրիան, որը վերցրել էր նրանից 1809թ. -ին:
4. Իր զորքերը հանում է Համբուրգ և Լյուբեկ քաղաքներից[30]:

Հունիսի 26-ին որպես միջնորդ նա գնաց Նապոլեոնի մոտ: Խոսակցությունը տևեց մի քանի ժամ և ավարտվեց Մետտեռնիխի առաքելության ամբողջական ձախողմամբ[31]:

1813թ. օգոստսին Ավստրիան պատերազմ է հայտարարում Ֆրանսիային: Օգոստոսի 28-ին Նապոլեոն Բոնապարտը Դրեզդենի մոտ հաղթանակ է տանում: Հակաֆրանսիական կոալիցիան մեծ առաջխաղացում ուներ: Ավստիական բանակը բանակը այդ պահին հաշվվում էր 127 հազար զինվոր, ռուսականը՝ 184 հազար, պրուսականը՝ 160 հազար զինվոր[32]:1813թ. հոկտեմբերի 16-18 Լայպցիգի մոտ տեղի ունեցավ եռօրյա ճակատամարտ՝ <<Ժողովուրդների ճակատամարտը>>, որտեղ Նապոլեոն Բոնապարտի բանակը պարտություն կրեց: Ճակատամարտում Ֆրանսիացիները կորցրեցին 65 հազար մարդ, իսկ դաշնակիցները ավելի քիչ: Ընդհանուր ճակատամարտին մասնակցել է մոտավորապես 500 հազար մարդ[33]:

Այս ճակատամարտից հետո Մյուրատը դավաճանում է Նապոլեոն Բոնապարտին և անցնում դաշնակիցների կողմը: Իսպանիայում անգլիական ու իսպանական կանոնավոր զորքերը հարձակման են անցնում և ֆրանսիացիներին դուրս հանում Իսպանիայից[34]: Այստեղ նրա եղբայրը՝ Ժոզեֆ թագավորը, բրիտանացի և իսպանացի ապստամբների կողմից դուրս է մղվում Պիրենեյան թերակղզուց: Նրա մյուս եղբայրը Ժերոմը, հեռացավ Կասելից: Անգլիան, Ռուսաստանը, Ավստրիան, Պրուսիան չէին հանգստանա, մինչև Ֆրանսիային չվերադարձնեն իրենց նախկին սահմաններին[35]:

Նապոլեոն Բոնապարտը գիտեր, որ ողջ ժողովուրդը հոգնել է պատերազմներից: Նա հույս ուներ, որ դաշնակիցներն իրենք կխախտեն իրենց պայմանները, և պատերազմի վերսկսման մեղքն իր վրա չի ընկնի[36]: Նապոլեոնը ցույց էր տալիս, թե ամենևին էլ դեմ չէր խաղաղ բանակցություններին: 1814 թվականի հունվարին հայտնի դարձավ, որ թշնամու բանակները վերջապես անցել են Հռենոսը, և

---

[30] Նույն տեղում էջ 418:

[31] Նույն տեղում:

[32] Новая история,под ред. Нарочницкого, указ соч., с. 204.

[33] Новая история,под ред. Е.Е. Юровской,И.М. Кривогуза, М.А.Полтавского, Т,1, М., 1983, с.115.

[34] Манфред А., Наполеон Бонапарт, Сухуми 1989, с.725-726.

[35] Тарле Е.В.,Сочинения,Т.7,М.,1959,с.307.

[36] Նույն տեղում էջ 314-315:

ներխուժումը տարածվում է Էլզասով և Ֆրաշ-Կոնտեով, որ Իսպանիայից հարավ գտնվող Վելինգթոնը անցել է Պիրենեյները և ներխուժել հարավային Ֆրանսիա[37]:

1813 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին դաշնակիցների համար նշանակալի հաջողություն էր Հոլանդիայի ազատագրումը ֆրանսիական զորքերից: Ռուս զինվորները Բենկենդորֆի գլխավորությամբ ներխուժեցին Հոլանդիայի մայրաքաղաք Ամստերդամ: Հաջորդ օրը գահ բարձրացավ Վիլհելմ I թագավորը[38]:

1814 թվականի հունվարի 25-ին Ֆրանսիայի Լանգրե քաղաքում Ռուսական կայսրության և Ավստրիայի կայսրերը, ինչպես նաև Պրուսիայի թագավորը որոշում են կայացրել միջամտել ով միապետությունը վերականգնել Ֆրանսիայում[39]:

Նապոլեոնը կարողացավ մի քանի հաղթանակներ տանել Ֆրանսիայի տարածքը ներխուժած հակառակորդների դեմ[40]:

Շոմոնյան տրակտատը ստորագրվեց Անգլիայի, Ռուսաստանի, Ավստրիայի և Պրուսիայի ներկայացուցիչների կողմից 1814թ. մարտի 1-ին: Դաշնակից պետություններից երեքը պարտավորեցնում էին 150 հազար զորք տրամադրել, իսկ Անգլիան պարտավորվում էր սուբսիդավորել պատերազմը: Դաշնակիցները պարտավորվում էին Եվրոպայում վերահաստատել միապետական կարգերը[41]:

Շոմոնի տրակտատը բաղկացած էր 17 բացահայտ և 3 գաղտնի հոդվածներից:

Գաղտնի հոդվածներ՝

Հոդված 1. Շոմոնի պայմանագրի գաղտնի հոդվածները որոշեցին Եվրոպայի հետպատերազմյան կառուցվածքը, մասնավորապես՝ Գերմանիայում ինքնիշխան իշխանությունների պահպանումը, Շվեյցարիայի միության վերականգնումն իր նախկին սահմաններում և նրա անկախության երաշխիքը եվրոպական մեծ տերությունների, այդ թվում՝ Ֆրանսիայի կողմից, վերադարձնել Ավստրիային իր նախկին իտալական ունեցվածքը, Իսպանիայում Բուրբոնների իշխանության վերականգնումը (Ֆերդինանդ VII), իսկ Հոլանդիայում՝ Օրանժի արքայազնին:

Հոդված 2. Շոմոնի պայմանագրի մասնակիցների հրավերով դրան պետք է միանային Իսպանիան, Պորտուգալիան, Շվեդիան, Հոլանդիան և այլ տերություններ: Խաղաղության կնքումից հետո մեկ տարվա ընթացքում դաշնակիցները պարտավորվեցին իրենց զորքերը պատրաստապահել Ֆրանսիայից հարձակման դեպքում:

Հոդված 3. Որոշեց Շոմոնի տրակտատի բացահայտ և գաղտնի հոդվածների վավերացման կարգը[42]:

---

[37] Նույն տեղում էջ 315:

[38] Могилевский Н.А., Заграничный поход русской армии 1813–1814 годов. — М.: Академический проект, 2018, с.184-185.

[39] Дебидур А., Дипломатическая история Европы, т. I, М. 1947, с.37.

[40] Նույն տեղում էջ 35:

[41] Всемирная история, т. VI, М. 1959, с. 321.

[42] http://www.hrono.info/dokum/1800dok/18140217shomon.php:

1814թ. մարտի 30-ին դաշնակիցները մտան Փարիզ, մի քանի օր անց Նապոլեոնը հրաժարվեց գահից: Ֆրանսիական գահը վերադարձվեց հեղափոխության արդյունքում դատապարտված Բուրբոնների դինաստիայից Լուի XVIII-ի[43]:

Ս.Մ. Սոլովյովը իր <<Կայսր Ալեքսանդր I>> աշխատության մեջ նշել է, որ 1814 թվականի գարնանը կայսր Ալեքսանդր I-ը մտածում էր «Բուրբոնների կրտսեր գծի հարմարությունների մասին ավագի դիմաց»՝ տարբերակներից մեկը համարելով Օռլեանի դուքսի ֆրանսիական գահին միանալու հնարավորությունը[44]: Ռուսաստանի կայսրը անմիջապես չմերժեց գահը Նապոլեոն I-ի որդուն փոխանցելու գաղափարը ՄարիաԼուիզայի օրոք[45]: Նապոլեոն կայսրի առաջին գահից հրաժարվելու պահին, որը տեղի ունեցավ 1814 թվականի ապրիլին, դաշնակից զորքերի Փարիզ հանդիսավոր մուտքից անմիջապես հետո, նրա փեսան՝ Յոահիմ Մյուրատի թագադրված մարշալի իշխանության ներքո դեռևս մնաց Նեապոլի թագավորությունը՝ մոտ 5 միլիոն մարդ բնակչությամբ և 2000 կիլոմետր ծովի ափով[46]: 1814 թվականի ապրիլի 11-ին Ֆոնտենբլոյում կնքվեց պայմանագիրի համաձայն Նապոլեոնը և Մարի-Լուիզան պայմանականորեն պահպանում էին կայսերական տիտղոսները, սակայն զրկվում էին Ֆրանսիայի վրա փաստացի իշխանությունից և իշխանությունը ժառանգաբար փոխանցելու իրավունքից: Նապոլեոնը ստացել է Էլբա կղզին որպես ցմահ ունեցվածք և 2 միլիոն ֆրանկ պահպանում, իսկ նրա ընտանիքը ստացել է Պարմայի, Պյաչենցայի և Գուաստալլայի դքսությունների տիրապետությունը[47]: Մինչդեռ Կոնգրեսի անդամները նաև հայտարարեցին, որ Ֆրանսիայի գահընկեց արված կայսրին միաժամանակ Ֆրանսիային և Իտալիային այդքան մոտ գտնվող Էլբա կղզի աքսորելու որոշումը անխոհեմ էր: Այդպես մտածեց, օրինակ, Մետերնիխը, որը 1814 թվականին դեմ արտահայտվեց այս որոշմանը[48]: Պրուսիայի կանցլեր Հարդենբերգի ծրագիրի համաձայն Վարշավայի դքսության հողերի մեծ մասը անցավ Ռուսաստանին: Ալեքսանդր I-ը կտրականապես հրաժարվեց քննարկել նման նախագիծը: Նա, իր հերթին, պնդել է անհապաղ խաղաղության պայմանագիր կնքել Ֆրանսիայի հետ: Բայց դաշնակիցների միջև տարաձայնություններ ծագեցին նաև Ֆրանսիայի հետ խաղաղության պայմանագրի պայմանների քննարկման ժամանակ[49]: Մեծ Բրիտանիայի

43 История дипломатии, под. Ред. А. Лактынова, с. 418.

44 Տե՛ս Яковлева Г.В., Венский конгресс 1814 - 1815 гг. в российской прессе, воспоминаниях и переписке первой половины XIX века, Санкт-Петербург, 2009, с.25.

45 Борисов Ю.В. Шарль-Морис Талейран. М., 1989. С.393.

46 Васильева Н.Ю., Неаполитанская дилемма Венского конгресса// сб. 200 лет Венской системе: проект и практика европейской дипломатии. М.,2016. С.96: https://risa.ru/

47 Ֆոնտեբլոնի պայմանագիր 1814 թվականի ապրիլի 11-ին// Նոր ժամանակների միջազգային քաղաքականությունը պայմանագրում, Ֆրանսիական հեղափոխությունից մինչև իմպերիալիստական պատերազմ: https://all-russia-history.ru/treaty-of-fontainebleau:

48 Дебидур А., նշվ. աշխ., էջ 72-73:

49 Зак Л.А., Монархи против народа (Дипломатическая борьба на развалинах Наполеоновской империи). М., 1966. С. 38.

արտաքին գործերի նախարարը պահանջել է Ֆրանսիայի կողմից համաձայնություն հաստատել Նիդերլանդների թագավորության ստեղծման, Անգլիայի կողմից մի շարք գաղութների պահպանման և ստրկավաճառության արգելմանն աջակցել ու վերաբերյալ: Պետության ղեկավարի դերը պատկանում էր թագավորին: Ֆրանսիական կառավարությունը գլխավորեց Թալեյրանը[50]:

Ալեքսանդր I-ի առաջ քաշած հիմնական պահանջը Ռուսաստանին միացնելն էր նախկին Վարշավայի դքսության տարածքը: Սակայն Լոնդոնի դաշնակիցների կոնֆերանսների ժամանակ հայտարարված ռուսական նման դիրքորոշումը հարուցեց Բրիտանիայի և Ավստրիայի համառ հակազդեցությունը[51]: 1814 թվականի մայիսի 18-ին Ֆրանսիայի և վեցերորդ հակաֆրանսիական կոալիցիայի միջև ստորագրվեց Փարիզի պայմանագիրը: Ըստ պայմանագրի Ֆրանսիան վերադարձվեց 1792 թվականի սահմաններին, բացի այդ, նրան փոխանցվեցին Լանդաուի, Սաարբրյուկենի, Մյուլհաուզենի, Ավինյոնի հողերը, վերադարձվեցին Նապոլեոնյան պատերազմների ժամանակ կորցրած գաղութների մեծ մասը: Անգլիան պահպանեց ռազմավարական առումով ամենակարևոր գաղութները, Նիդեռլանդները վերականգնեց անկախությունը: Պայմանագրով նախատեսվում էր Ջենովան հանձնել Պիեմոնտին, Լոմբարդիան և Վենետիկը Ավստրիային, Շվեյցարիայի ինքնիշխանության պահպանումը և գերմանական նահանգների դաշնության ստեղծումը: 1814 թվականի մայիսի 30-ի Փարիզի խաղաղության պայմանագրի 32-րդ հոդվածը նախատեսում էր, որ եվրոպական տերությունների լիազոր ներկայացուցիչները կհավաքվեն Վիեննայում ոչ ուշ, քան 1814 թվականի օգոստոսի 1-ը: Ալեքսանդր I կայսրը պնդել է գումարման օրը տեղափոխել հոկտեմբերի 1: Այսպիսով, Վիեննայի Կոնգրեսի պաշտոնական բացումը նախատեսված էր 1814 թվականի հոկտեմբերի 1-ին[52]: Այնուամենայնիվ, հոդված 1-ի համաձայն, որը առանձին և գաղտնի էր մանրանշվեց, որ տարածքների բաշխումը, որը պետք է ստեղծի ուժերի իրական և կայուն հավասարակշռություն Եվրոպայում, կիրականացվի վեհաժողովում դաշնակից տերությունների կողմից իրենց միջև հաստատված հիմքի վրա[53]:

## ԳԼՈՒԽ II. ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ: ՄԵԾ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1814թ. սեպտեմբերի 19-ին (հոկտեմբերի 1-ին) բացվեց Վիեննայի վեհաժողովը: Այն վերջին աստիճանի ներկայացուցչական էր, քանի որ 1814թ. Մայիսի 30-ին կնքված Փարիզի պայմանագրի համաձայն՝ վեհաժողովի աշխատանքներին մասնակցել ու

---

[50] Новая история,под ред. Е.Е. Юровской,И.М. Кривогуза, М.А.Полтавского, указ соч., С.118.

[51] Зак Л.А., նշվ. աշխ., էջ 42:

[52] Նույն տեղում էջ 42:(Այս առնչությամբ տե՛ս նաև История дипломатии, под. Ред. А. Лактынова, с.420).

[53] Зак Л.А., նշվ. աշխ., էջ 40:

իրավունք էին ստացել Նապոլեոնյան Ֆրանսիայի դեմ պատերազմած բոլոր տերությունները: 1814թ. սեպտեմբերին Ավստրիայի մայրաքաղաք սկսեցին ժամանել Եվրոպայի բոլոր տերությունների ներկայացուցիչները, բացառությամբ Թուրքիայի:

Վիեննայի վեհաժողովը բավականին ներկայացուցչական էր, այնտեղ ժամանել էին երկու կայսր, չորս թագավոր, երկու թագաժառանգ, երեք մեծ դքսուհիներ, 215 իշխանական տների ներկայացուցիչներ և շուրջ 450 դիվանագետ և պաշտոնյա[54]: Պետության ղեկավարների և դիվանագիտական ներկայացուցիչների հետ միասին Վիեննա էին ժամանել նաև նրանց կանայք, բարեկամները, վաճառականներ, բանկիրներ, նկարիչներ, բանաստեղծներ և այլք:

Ժամանակակիցները պնդում էին, որ «ամբողջ Եվրոպան տեղափոխվեց Վիեննա»: Համագումարի մասնակիցներին սպասարկելու համար հատկացվել է 300 կառք և ավելի քան 1200 ձի, իսկ եկածների թիվը մոտավոր հաշվարկվել է 100 հազար մարդ[55]:

Ժամանակակիցներն այս կոնգրեսը կեսկատակ անվանում են ‹‹պարող››:

Պետությունների ներկայացուցիչները եկել էին իրենց ընտանիքներով և շքախմբով: Տոնակատարությունները կազմակերպելու համար ստեղծվել է հատուկ հանձնաժողով: Պարահանդեսները, դիմակահանդեսները, թատերական ներկայացումները և ամենատարբեր ընդունելությունները տպավորված էին իրենց շքեղությամբ և տեղի էին ունենում գրեթե ամեն օր: Այս հանգամանքները մեկնաբանել է բելգիացի դիվանագետ արքայազն Շարլ Ժոզեֆ դե Լայնը, ով գրել է. «Կոնգրեսը պարում է, բայց առաջ չի գնում»[56]: 1814 թվականի աշնանը թագադրված անձանցից Վիեննա են ժամանել Ռուսաստանի կայսր Ալեքսանդր I-ը, Պրուսիայի արքա Ֆրիդրիխ Վիլհելմ III-ը, Դանիայի թագավոր Ֆրեդերիկ VI-ը, Վյուրտեմբերգի արքա Ֆրիդրիխ I-ը, Բավարիայի արքա Մաքսիմիլիան I Իոսիֆը: Վիեննայում էր նաև Բելգիայի ապագա թագավոր Սաքսեն-Կոբուրգացի արքայազն Լեոպոլդը: Մասնակցել են Իսպանիայի, Պորտուգալիայի, Շվեդիայի ներկայացուցիչներ, գերմանական և իտալական բոլոր նահանգների ներկայացուցիչներ: Ալեքսանդր I-ի ուսուցիչ Ֆրեդերիկ Լագարպը ներկայացնում էր Շվեյցարիայի կանտոնները[57]: Վիեննայի համակարգի շրջանակներում առաջին անգամ ձևակերպվել է մեծ տերություններ հասկացությունը, այն ժամանակ այդպիսի տերություններ էին համարվում Մեծ Բրիտանիան, Ավստրիան, Ռուսաստանը, նրանցից հետո՝ Պրուսիան, իսկ ապա՝ նաև թեպետ պարտված, սակայն դեռևս հզոր Ֆրանսիան): Վիեննայի կոնգրեսի կարևորագույն խնդիրներն էին Ֆրանսիական մեծ հեղափոխությամբ և Նապոլեոնյան

---

54 История внешней политики России (конец XVв., 1917г.) пержая половина XIX века, М. 1999, с. 118.

55 Зак Л.А., նշվ. աշխ., էջ 44:

56 Соловьев С.М., Император Александр I. Политика, дипломатия. М., 2003. С. 57.

57 Хазин А.Л., Богданов С.В, Государственное управление. Электронный вестник, Выпуск № 40. Октябрь 2013, С.237.

պատերազմների ժամանակ վերացված ավատական միապետական կարգերի վերականգնումը, մի շարք տապալված դինաստիաների վերահաստատումը, պայքարը ազգային-ազատագրական և հեղափոխական շարժումների դեմ, դաշնակից պետությունների հաղթանակի ամրապնդումը, Եվրոպան Ֆրանսիայի նոր զավթողական պատերազմներից ապահովագրելու ամուր երաշխիքների ստեղծումը, հաղթողների տարածքային հավակնությունների բավարարումը և Եվրոպայում նոր պետական սահմանների հաստատումը[58]:

Վիեննայի կոնգրեսում ընդունված փաստաթղթերի շարքում հատուկ տեղ է զբաղեցնում 1815թ. մարտի 9-ին ստորագրված «Դրույթներ դիվանագիտական ներկայացուցիչների կարգերի մասին» ակտը: Այս որոշումը վերջ դրեց ավագության հետ կապված անվերջ վեճերին և կոնֆլիկտներին: Որոշվեց բոլոր դիվանագիտական ներկայացուցիչներին բաժանել երեք դասի կամ կարգի:

- Դեսպան, պապական լեգատ և նունցիա
- Դեսպանորդ
- Ժամանակավոր հավատարմատար[59]

«Գերմանական միության» մեջ էին մտնելու 38 գերմանական պետություններ, այդ թվում նաև Ավստրիան և Պրուսիան: Այս սեյմում նախագահելու էին Ավստրիայի ներկայացուցիչները, և ձայներն այնպես էր բաշխվել, որ վերջնական որոշում կայացնողն Ավստրիան էր:

Դաշնակիցների միջև հակամարտություններն այնքան էին թեժացել, որ Ավստրիայի, Անգլիայի առաջին դեմքերը փորձեցին Ռուսաստանի դեմ ռազմաքաղաքական խմբակցություն ստեղծելու ընթացքում իրենց կողմը գրավի անգամ Ֆրանսիային: Օգտվելով այդ շահերի բախումներից Թալեյրանին հաջողվեց Ֆրանսիային Վիեննայի վեհաժողովից դուրս բերել առանց մեծ կորուստների: Նա հաջվենկատրեն օգտագործեց Ռուսաստանի դեմ լարված որոգայթը և դավերը[60]:

Ռուսաց կայսեր կարծիքով Վարշավայի դքսությունը պատկանում էր իրենց Նապոլեոնյան պատերազմում հաղթողի իրավունքով: Ավստրիական կողմը մտադրություն չուներ զիջելու նախկինում իր մասը կազմած նահանգները: Պրուսիան նույնպես պահանջում էր Վարշավայի դքսության մի մասը: Անգլիական դիվանագիտությունն օգտվելով այդ հակամարտությունից փորձում է թուլացնել Ռուսաստանը և Լեհաստանը դուրս բերել ռուսաց կայսրության ենթակայությունից[61]:

---

[58] М.-П. Рей,РОССИЯ И МИР В XIX ВЕКЕ,2017, С.38.

[59] История дипломатии, т. I, М. 1959, с. 501.

[60] Նույն տեղում, էջ 114:

[61] Նույն տեղում, էջ 114:

Ալեքսանդր Ա-ն Ֆրիդրիխ-Վիլհելմ III-ի հետ անձնական հանդիպման ժամանակ համոզեց նրան, որ լեհական հարցում չհամագործակցի Ավստրիայի, Անգլիայի և Ֆրանսիայի հետ[62]:

Պրուսիայի թագավորն անմիջապես հրավիրեց Հարդենբերգին ու կայսրի ներկայությամբ կարգադրեց Ռուսաստանի դեմ ռազմաքաղաքական գործարքներից հեռու մնալ [63]: Ալեքսանդր I-ը Ֆրիդրիխ-Վիլհելմ III-ին համարում էր իր միակ բարեկամը և դաշնակիցը: Պրուսիայի թագավորը պատասխանում էր փոխադարձությամբ, Պրուսիայի հետ հարաբերությունների կարգավորման շնորհիվ Ռուսաստանը միանգամից լուծում էր երեք հիմնախնդիր[64]: Պրուսիայի թագավորին դարձրեց իր դիվանագիտական աջակիցը, երկրորդ՝ Եվրոպայում հաստատվում էր ուժերի հարաբերակցության հավասարակշռությունը և երրորդ՝ բացառվում էր Պրուսիայի մասնակցությունը գաղտնի կազմավորվող ռազմաքաղաքական դաշինքին[65]:

Ավստրիային վերադարձվում էին արևելյան Գալիցիայի գավառները, Պրուսիան ստանում էր Պոզնանը, Բրոմբերգը և Տորնը, Կրակով քաղաքը հարակից տարածքներով, հռչակվում էր ազատ քաղաք երեք տերությունների հովանավորության ներքո ու ստանում էր սահմանադրություն: Վարշավայի դքսության մնացած մասը միացվում էր Ռուսաստանի <<Լեհական Թագավորություն>> անունով[66]: Ալեքսանդր I-ի այն հայտարարությունը, որ Ռուսաստանը պատրաստ է հրաժարվել Կրակովից և Տորնից, որպեսզի նրանք դառնան ազատ քաղաքներ, ի վերջո, ռուսական ցարը նման հայտարարություն արեց իր «դաշնակիցների», այդ թվում՝ Պրուսիայի հարձակման ներքո, որոնք հավակնում էին այդ քաղաքներին[67]:

Այսպիսով, համագումարի մասնակիցներն ունեին նաև ընդհանուր նպատակներ, որոնք պահանջում էին ամենաարագ իրականացում.

1. Քաղաքական հավասարակշռության համակարգի ստեղծում, որն ընդունակ է ապահովել Եվրոպային խաղաղություն և հանգստություն Ֆրանսիական հեղափոխությունից և Նապոլեոնյան պատերազմներից հետո: Խնդիրն էր կանխել նոր հեղափոխական ցնցումները ու պատերազմները:

2. Եվրոպայի ժողովուրդների հանրապետական-դեմոկրատական և ազգային-ազատագրական շարժումների ճնշումը և Նապոլեոնի կողմից նվաճված նահանգներում նախկին ֆեոդալական-աբսոլուտիստական կարգի վերականգնումը:

[62] Մուրադյան Մ, Մինասյան Է.,նշվ. աշխ., էջ 215:
[63] Дебидур А., նշվ. աշխ., էջ 65-66:
[64] История внешней политики России (конец XVв., 1917г.) первая половина XIX века, М. 1999, с. 126.
[65] История дипломатии, под. ред. А. Лактынова, , с. 425.
[66] Մուրադյան Մ. Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 216:
[67] Зак Л.А., նշվ. աշխ., էջ 93:

3. Ամրապնդել Նապոլեոնի նկատմամբ տարած հաղթանակը, ստեղծել հուսալի խոչընդոտ բոնապարտիստական ռեժիմի վերականգնման համար:

4. Նրանց տարածքային պահանջների բավարարում և տերությունների եվրոպական և գաղութային ունեցվածքի վերաբաշխում[68]:

Թալեյրանը մանևրովապես արդեն պատրաստ էր ընդունել Ալեքսանդրի պահանջը Վարշավայի դքսության վերաբերյալ և այդ հիմնախնդրում չաջակցել Ավստրիային, չօգնել Անգլիային, բայց ոչ մի կերպ չէր համաձայնվում Սաքսոնիան հանձնել Պրուսիային: Ահաթե ինչու նրան դա ոչ այնքան մտահոգում էր, ի հաշիվ Լեհաստանի, Ռուսաստանի հզորացումը կանխելու խնդիրը, որքան Պրուսիայի հետագա զորեղացմամբ ծախողումը: Եթե Սաքսոնիան միացվեր Ֆրիդրիխ-Վիլհելմ Գ-ի թագավորությանը, ապա Պրուսիան կդառնար՝ Ֆրանսիայի համար վտանգավոր հակառակորդ[69]:

Մետերնիխն առաջարկեց Քեսլրին Հարդենբերգի միջոցով տեղեկացնել Պրուսիայի թագավորին, որ իրենք համաձայն են ամբողջ Սաքսոնիան հանձնել իրեն, որի դիմաց Ֆրիդրիխ-Վիլհելմ Գ-ն պետք է անհապաղ միանաԱնգլիային ու Ավստրիային և նրանց հետ միասին կանխարգելի Ալեքսանդրի մտադրությունը միացնելու Վարշավայի դքսությունը Ռուսաստանին: Սակայն նախրաժարվեց[70]:

Ֆրանսիական պատվիրակությունը ժամանել էր Թալեյրանի գլխավորությամբ: «Լեգիտիմության» գաղափարը նրան օգնեց հետագայում պաշտպանել Սաքսոնիան Պրուսիային միանալուց, ինչը կարևոր էր Ֆրանսիայի համար[71]: Թալեյրանը հանդես գալով որպես պարտված երկրի ներկայացուցիչ, քաղաքական բարդ իրադրությունում կարողացավ հմտորեն դիվանագիտական ուղիով միջազգային իրավունքը շրջել դեպի իրենց ծառայեցնելով Ֆրանսիային և Բուրբոններին[72]:

Կոնգրեսի աշխատանքները պաշտոնապես բացվեց միայն 1814 թվականի նոյեմբերին: Սաքսոնական հարցն այն խնդիրներից էր: Թալեյրանը ամեն կերպ փորձում էր ոչ թույլ չտալ Սաքսոնիայի փոխանցումը Պրուսիայի թագավորին, քանի որ դա անկասկած ուժեղացնում էր Պրուսիան, ով Ֆրանսիայի անմիջական հարևանն էր: Ֆրիդրիխ Վիլյամ III-ը չնչին դեր խաղաց համագումարում, թագավորը համեմատաբար հանգիստ էր, քանի որ Ալեքսանդրը խոստացել էր նրան փոխանցել սաքսոնական հողերը[73]:

---

[68] Спицын Е.Ю. Российская империя XVIII- начала XX века. М., 2015. С. 312.

[69] Սուրադյան Մ. Մինասյան Է., նշվ. աշխ., էջ 218:

[70] Сергеев В., История Европы XIX-XXвв., т. II, с. 219.

[71] Тарле Е.В. Талейран. М., 2011 С. 232.

[72] Орлов А. С. И др., История России, М., 1997, с. 218.

[73] История дипломатии, под. ред. А. Лактынова, , с.424-425.

1814 թվականի դեկտեմբերի վերջին Թալեյրանը համոզեց Մետերնիխին և Քեսլերրին Ֆրանսիայի, Ավստրիայի և Անգլիայի միջև համաձայնագիր կնքելու անհրաժեշտության մասին: Այն պարունակում էր պաշտպանողական դաշինք ստեղծելու գաղափարը՝ որպես Փարիզի պայմանագրի պայմանների կատարման մաս: Կողմերը անհրաժեշտ էին համարում փոխադարձ համաձայնությամբ պահպանել արդարության և իրավունքի սկզբունքը և, այնուամենայնիվ, ցանկանալով կատարել Փարիզի պայմանագրի դրույթները, իր իրական նպատակներին համապատասխան ձևով, այդ նպատակով որոշել է փոխադարձաբար հաստատել հանդիսավոր համաձայնություն և կնքել պաշտպանական դաշինք[74]: Այս պահը նրա դիվանագիտական գործունեության հաղթանակներից էր: Օգտվելով դաշնակիցների միջև տիրող տարաձայնությունից կարողացել է հանգեցնել նոր դաշինքի ստեղծմանը, որտեղ գլխավոր դերը պատկանում էր Ֆրանսիային[75]:

Գերմանական խնդիրը Եվրոպայի հետպատերազմյան վերակազմավորման կարևոր բաղադրիչներից մեկն էր հանդիսանում: 1814 թվականի հոկտեմբերի 14-ին ստեղծվեց Գերմանիայի գործերի կոմիտե, որը բաղկացած էր Ավստրիայի, Պրուսիայի, Բավարիայի, Վյուրտեմբերգի և Հանովերի ներկայացուցիչներից: Մետերնիխը առաջ քաշեց իր ծրագիրը՝ ստեղծելու Գերմանական Համադաշնություն՝ միավորելով 38 գերմանական նահանգներ, ինչպես նաև Ավստրիան և Պրուսիան[76]: Փարիզի պայմանագրի և Շոմոնի համաձայնագրի հիման վրա Գերմանիայի Դաշնությունը պետք է ստեղծվի հետևյալ դրույթների հիման վրա

• Պատերազմի և խաղաղության հարցերը դաշնության լիազորություններն են:

• Դաշնային դատարանն իրավունք ունի լուծել ֆեդերացիայի անդամների միջև վեճերը:

• Ֆեդերացիայի գլխին պետք է լինի հինգ անդամներից բաղկացած Դիրեկտորիա:

• Իշխանների տիրույթներում ստեղծվում են տեղական ներկայացուցչական ժողովներ: •Ֆեդերացիան՝ Գերմանիայի բնակչության ընդհանուր իրավունքները կարգավորելու իրավունքով: Ռուսաստանի կայսրը ոչ միայն աջակցել է այս ծրագրին, այլև պատրաստակամություն է հայտնել միջամտել, եթե դա պահանջեն հանգամանքները[77]:

Այսպիսով, միջազգային քաղաքականության ուղղությունը կենտրոնացած էր Ռուսաստանի, Ավստրիայի և Անգլիայի ձեռքում: Նապոլեոն Բոնապարտը հույս ուներ

---

74 Ռուսաստանի և Պրուսիայի դեմ պաշտպանական դաշինքի գաղտնի պայմանագիր, որը կնքվել է Ավստրիայի, Անգլիայի, Ֆրանսիայի միջև Վիեննայում 1815 թվականի հունվարի 3-ին: https://russiantheory.ru/?p=4555:

75 История дипломатии, под. ред. А. Лактынова, , с.425.

76 Նույն տեղում, էջ 425-426:

77 Зак Л.А., նշվ. աշխ., էջ 119-120:(Այս առնչությամբ տե՛ս նաև Протопопов А.С. История международных отношений и внешней политики России, М., 2012. С. 269).

վերադառնալ իշխանության: 1815 թվականի մարտի 1-ին 1000 գվարդիական պահակազորով վայրէջք կատարեց Ֆրանսիայի հարավում և շարժվեց դեպի Փարիզ: Նրա դեմ ուղարկված զորքերը անցան նրա կողմը: Մարտի 19-ին երեկոյան ժամը 11-ին թագավորը իր ընտանիքի հետ փախավ Փարիզից և անցավ բելգիական սահմանը: Մարտի 20-ին երեկոյան ժամը 9-ին Նապոլեոնը Փարիզում էր[78]: Կայսրության դեմ անմիջապես ստեղծվեց նոր՝ յոթերորդ կոալիցիան, որի կազմի մեջ էր Անգլիան, Ռուսաստանը, Ավստրիան, Պրուսիան, Շվեդիան, Իսպանիան և այլ պետություններ: Դաշնակիցների թիվը ճնշող մեծամասնությամբ գերազանցում էր: Երկարատև պատերազմներն արդեն սպառվել էին Ֆրանսիայի ռեսուրսները, և նրա բնակչությունը հիասթափված էր կայսրության նախկին բռնապետական ռեժիմը պահպանելու Նապոլեոնի մտադրությունից[79]:

Վիեննայի Կոնգրեսում ֆրանսիական պատվիրակությունը պնդում էր, որ Նեապոլի իտալական գահից Մյուրատի տապալումը, նպաստել էր Նապոլեոն Բոնապարտի հաջողություններին: Ըստ Մյուրատի եկել էր պահը իր իշխանությունը տարածել ողջ Իտալիայի վրա, բայց դա նրան չհաջողվեց, այնտեղ վերադարձավ Ֆերդինանդ IV-ը[80]:

1815 թվականի հունիսի 12-ին Նապոլեոնը մեկնեց Բրյուսել՝ միանալու բանակին: Հունիսի 18-ին նապոլեոնյան բանակը վերջնականապես ջախջախվեց անգլիական և պրուսական զորքերի կողմից Վաթերլոյի մոտ: Հունիսի 22-ին հարյուրօրյա թագավորությունից հետո Նապոլեոնը ստիպված հրաժարվեց գահից, իսկ դրանից հետո նա աքսորվեց Սուրբ Հեղինե: Դաշնակցային զորքերը հուլիսի 6-ին մտան Փարիզ: Հուլիսի 8-ին Բուրբոնները նորից վերահաստատվեցին գահին[81]:

Նապոլեոնը Վաթերլոյում կրած պարտությունից մեկ շաբաթ անց ասաց. «Տերությունները ոչ թե պատերազմ են մղում ինձ հետ այլ հեղափոխության: Նրանք միշտ իմ մեջ տեսնում էին նրա ներկայացուցչին՝ հեղափոխության մարդուն»[82]:

## ԳԼՈՒԽ III. ՎԻԵՆՆԱՅԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԱԿՏԸ

Նապոլեոնը համոզված էր, որ Կոնգրեսը շուտով կլուծարվի, սակայն նա սխալվեց: 1815 թվականի մարտի 13-ին դաշնակից տերությունները ստորագրեցին Նապոլեոնի դեմ հռչակագիրը, նրանք օգնություն խոստացան Ֆրանսիայի թագավորին

---

78 Тарле Е. Сочинения, указ соч., с.351.

79 Новая история,под ред. Нарочницкого, указ соч., с.206.

80 Дебидур А., նշվ. աշխ., էջ 77:

81 Новая история,под ред. Нарочницкого, указ соч., с.206.

82 http://lib.ru/TARLE/napoleon/part16.html:

և ֆրանսիացի ժողովրդին յուրացնողի դեմ պայքարում: Կարելի է ավելացնել, որ այս հռչակագիրը Վիեննայի կոնգրեսում ընդհանուր համաձայնության առաջին արդյունքն էր: Իսկ 1815 թվականի մարտի 25-ին Վիեննայում կնքվեց դաշնակիցների պայմանագիրը, որը փաստացի վերականգնեց հականապոլեոնյան կոալիցիան[83]: 1815 թվականի հունիսի 9-ին Կոնգրեսի աշխատանքն ավարտվեց Եզրափակիչ ակտի ստորագրմամբ: Վիեննայի կոնգրեսի եզրափակիչ ակտը բաղկացած էր 121 հոդվածից և գրված էր ֆրանսերենով, 120-րդ հոդվածում ասվում էր, որ դա չպետք է նախադեպ ծառայի ապագայում միջազգային պայմանագրերի ստորագրման համար[84]: Վիեննայի վեհաժողովի եզրափակիչ ակտը վավերացվել է ստորագրման օրվանից վեց ամիս հետո: Վիեննայի Կոնգրեսի վերջնական փաստաթուղթը՝ Եզրափակիչ ակտը, ստորագրվել է Ավստրիայի, Անգլիայի, Պրուսիայի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Պորտուգալիայի, Շվեդիայի կողմից 1815 թվականի հունիսի 9-ին՝ Վաթերլոոյում Նապոլեոնի պարտությունից և գահից հրաժարվելուց մի քանի օր առաջ: Փաստաթուղթը կազմել էր Գենթցը, որն իր մեջ պարունակում էր վեհաժողովի օրերին ձեռք բերված համաձայնագրերը[85]:

Վիեննայի վեհաժողովի եզրափակիչ ակտը սկզբում ստորագրեցին Փարիզի պայմանագիրը ստորագրած երկրները՝ Ավստրիան, Անգլիան, Պորտուգալիան Պրուսիան,Ռուսաստանը, Ֆրանսիան, Շվեդիան[86]: Հաջորդ հինգ տարիների ընթացքում 33 եվրոպական պետություններ միացան այս պայմանագրին, որոնցից վերջինը Բավարիան էր 1820 թվականի մայիսին: Այն նախատեսում էր Բուրբոնների վերականգնումը՝ ի դեմս Լուի XVIII-ի, և Ֆրանսիային զրկում էր Եվրոպայում իր նվաճումներից: Ֆրանսիայի հյուսիսային սահմաններում ստեղծվեց Նիդերլանդների թագավորությունը, որը Պրուսիայի և Ավստրիայի հետմիասին պետք է պատնեշ կազմեր պատերազմ սկսելու ֆրանսիացիների հնարավոր փորձերի դեմ[87]: Վիեննայի գլխավոր փաստաթուղթն այն համաձայնությունների շարադրանք էր, որի մինչ այդ՝ վեհաժողովի աշխատաքերի ընթացքում, կայացրել էին առանձին պետությունները[88]: Ֆրանսիայի սահմանները որոշվեցին համաձայն 1814թ. Փարիզի հաշտության պայմանագրի: Ռուսաստանը ստացավ Վարշավայի Մեծ Դքսությունը, բացառությամբ Տորնի, Պոզնանի, Կրակովի և Արևելյան Գալիցիայի տարածքների: Լեհաստանի սահմանադրությունը պետք է ամրապնդի Ռուսաստանի և Վարշավայի դքսության միջև անքակտելի կապը: Այս սահմանադրությունը հռչակում էր բոլոր

---

[83] Нарочницкий А.Л. Международные отношения европейских государств с 1794 по 1830 г., М., 1946.,С. 54.
[84] История дипломатии/ под ред. В.П.Потемкина. М., Т.II. 1941. С. 165.
[85] Зак Л.А., նշվ. աշխ., էջ 286:
[86] Նույն տեղում, էջ 287:
[87]https://megabook.ru/article/:
[88] Дебидур А., նշվ. աշխ., էջ 91:

սահմանադրական ազատությունները և քաղաքացիական իրավունքներ շնորհում լեհերին: Լեհերենը դարձավ պետական լեզու, ճանաչվել է որպես հասարակական-քաղաքական կյանքի լեզու: Լեհ ժողովրդի ինքնիշխանությունն ընդգծվում էր սեփական օրենսդիր և գործադիր իշխանության՝ ազգային բանակի առկայությամբ[89]: Կայսրության լեհ հպատակները իրավունք ստացան ունենալ իրենց ներկայացուցիչները Ռուսաստանի ազգային պետական հաստատություններում: Ավստրիան հրաժարվում էր իր իրավունքներից Բելգիայում, իր ունեցվածքը հարավ-արևելյան Գերմանիայում և Լեհաստանում, և ստանում է Արևելյան Գալիցիան: Հյուսիսային Իտալիայից՝ Լոմբարդիան, Վենետիկը, Ռագուզայի նախկին հանրապետության տարածքը և Վալտելինան: Ավստրիան, տիրապետելով Հյուսիսային Իտալիայի մեծ մասին, դարձավ Ապենինյան թերակղզու հեգեմոնը:Եզրափակիչ ակտի 51-րդ հոդվածի հիման վրա Հռենոսի ձախ ափին գտնվող հողերը նույնպես անցել են Ավստրիային[90]:

Պիեմոնտը ետ ստացավ Նապոլեոնյան պատերազմի տարիներին կորցրած տարածքները և իրեն վերադարձրեց Ջենովան, իսկ Սավոյան և Շվեյցարիայի մի մասը զիջեց Ֆրանսիային: Պիեմոնտի փագավոր Վիկտոր Էմմանուիլ I-ի արքայատոհմի սպառման դեպքում գահին հաստատելու էր սավոյա-կարինյան ճյուղը[91]:

Ավստրիայի կայսեր եղբայրը՝ արքիդուքս Ֆերդինանդին վերադարձվեց Տոսկանան: Նա ստացավ նաև Էլբա և Պոմբինո կղզիները[92]: Ավստրիան Պապին է վերադարձնում Ռումինիան և դրանով վերականգնում Պապական շրջանի ամբողջությունը: Էրցհերցոգ Ֆրանց Էստեն հետ է ստանում Մոդենա, Ռեջիո և այլ հերցոգությունները, որոնք պատկանում էին ավստրիական տանը: Կայսրուհի Մարիա Լուիզան պահպանում է Պարման, Պյաչենցան, Գվաստալան, նրանց վերադարձի հարցը թողնվում է հետագային Էրցհերցոգ Ֆերդինանդը վերադառնում է Տոսկանա ստանում է Պրեզիդները, Պոմբինոն, Էլբա կղզին և թոշակի իրավունք վերջապես Ֆերդինանդ IV-ը վերականգնվում է Նեապոլում և ճանաչվում է երկու Սիցիլիաների թագավոր[93]:Պրուսիան ստացավ Սաքսոնիայի տարածքի գրեթե կեսը՝ 20 հազար քառակուսի կիլոմետր տարածք և 800 հազար բնակչություն: Լեհաստանից Պրուսիային անցան Տորնը և Պոզնանը: Հռենոսի ձախ ափին Պրուսիան ստացավ 110 հազար բնակչությամբ տարածք: Ինչպես նաև Վեստֆալիայի մեծ մասը: Արդյունքում

[89] Дмитрий Семушин, Польский вопрос: урок Венского конгресса для современной России,2015: https://topwar.ru/:

[90] Зак Л.А., նշվ. աշխ., էջ 287-288:

[91] Նույն տեղում, էջ 288-289:

[92] Նույն տեղում, էջ 289:

[93] Дебидур А., նշվ. աշխ., էջ 94:

Պրուսիան դառնում է սահմանակից Ֆրանսիային և Նիդեռլանդներին: 1815թ. հունիսի 4-ի պայմանագրով Պրուսիան Դանիայից ստացավ Շվեդական Պոմերնիան և Ռյուգեն կղզին, բայց նրան զիջեց Լաուենբուրգը: Պրուսիայի նվաճումները 1806թ. համեմատությամբ ամրապնդվել էին և անհամեմատ ավելի շատ էր քան Լեհաստանում իր կորցրած տարածքները[94]: Բացի դրանից, Պրուսական միապետությունն իր տարածքները մեծացնում է մի քանի փոքր պետությունների հաշվին, ձեռք բերելով Վետցլար քաղաքը[95]:Սաքսոնիայի թագավորությունը պահպանվում է, բայց համեմատաբար փոքր տարածքում, պահպանելով իր երկու խոշոր քաղաքները՝ Դրեզդենը և Լայպցիգը[96]:

Բավարիան ստանում է Վյուրցբուրգյան Հերցոգությունը և Աշաֆենբուրգյան իշխանությունը: Նախկին Ֆրանկֆուրտյան հերցոգը ստանում է դրամական փոխհատուցում: Ֆրանկֆուրտը հայտարարվում է ազատ քաղաք: Հերցոգ Հեսեն Դարմշտադսկին Ռեյնի աջ ափին ստանում է Մայնցի տարածքն իր 140 հազար բնակիչով, իսկ Լանկոմս Հեսեն Համբուրգից վերականգնվում է իր տիրույթներում[97]:

Այս տարածքային սահմանումները հետևում է <<Գերմանական միության մասին>> ակտի 11 կարևորագույն հոդվածները՝ հոդված 53-63: Այսուհետև հետևում են Նիդեռլանդների մասին դրույթները: Լյուքսեմբուրգյան Հերցոգությունը դառնում է գերմանական միության անդամ, իսկ նրա մայրաքաղաքը կարող է լինել միության ամրոցը[98]:

1815թ. հունիսի 8-ի ակտով վեհաժողովը ստեղծում է Գերմանական միությունը, որի կազմի մեջ մտան 34 պետություններ և 4 ազատ քաղաքներ՝ Համբուրգը, Բրեմենը, Լյուբեկը, Մայնի Ֆրանկֆուրտը:

Հոդված 53. Գերմանիայի բոլոր ինքնիշխան իշխանություններն ու ազատքաղաքները, ներառյալ Ավստրիայի կայսրը, Պրուսիայի թագավորը, Դանիայի և Նիդեռլանդների թագավորը, առաջինը, այսինքն Ավստրիայի կայսրը և Պրուսիայի թագավորը՝ որպես իրենց ունեցվածքի ինքնիշխաններ, որոնք նախկինում պատկանում էին Գերմանական կայսրությանը և Դանիայի թագավորը որպես Հոլշտեյնի դուքս, և Նիդեռլանդների թագավորը, որպես Լյուքսեմբուրգի Մեծ Դուքս, իրենց միջև որոշում են հավերժական դաշինք՝ ընդհանուր գերմանական համադաշնության անվան տակ:

Հոդված 54. Այս դաշինքի նպատակը լինելու է Գերմանիայի արտաքին և ներքին անվտանգության պահպանումը, նրան պատկանող հողերի անկախությունն ու անձեռնմխելիությունը:

---

[94] Зак Л.А., նշվ. աշխ., էջ 289-290:

[95] Новая история, т. I, М. 1986, с. 320.

[96] Зак Л.А., նշվ. աշխ., էջ 290:

[97] Зак Л.А., նշվ. աշխ., էջ 291:

[98] Дебидур А., նշվ. աշխ., էջ 93:

Հոդված 56. Միության գործերի կառավարումը վստահվել է սեյմին, որի բոլոր անդամները, առանց իրավունքների որևէ խախտման, իրենց ձայնը կտան իրենց լիազորված անձանց միջոցով[99]:

Այնուհետև մի քանի հոդվածներ վերաբերում են Շվեյցարիային, որը պետք է կազմված լինի 22 կանտոններից: Ավստրիան և Սարդինիան զիջում են Շվեյցարիային մի քանի ոչ մեծ տարածքներ, տերություններ երաշխավորում են ֆինանսական և այլ համաձայնություններ կանտոնների միջև, ինչպես նաև Շվեյցարիայի անձեռնմխելիությունը և սահմանադրությունը,որը ընդունվեց 1815թ. օգոստոսին, որը նակմշակի վեհաժողովի ցուցումով[100]:

Սարդինական թագավորը հետ է ստանում իր տիրույթները՝ բացառությամբ Սավոյայի երկու մասերի,որոնք զիջվեցին Շվեյցարիային և Ֆրանսիային: Փոխարենը նաստանում է նախկին կայսերական հողերը և Քենիան իր հողերով, պահպանելով նրա ազատությունների մեկ մասը: Նրա ժառանգությունը պետք է անցնի արական զավակներին[101]: Վյուրտեմբերգը և Բադենը պահպանում են նապոլեոնյան պատերազմների ժամանակ ձեռք բերվածը: Հանովերը վերածվում է թագավորության, Անգլիայի թագավորը ստանում է Հաննովերի թագավորի տիտղոսը: Հանովերին է անցնում Վեստֆալիայի և Հեսսենի մի քանի շրջաններ, կորցնում է Լաուենբերգը, որը անցնում է Դանիային: Վերջինս էլ այն փոխանակում է Շվեդական Պոմերանիայի հետ:

Անգլիան ամրապնդեց իր առևտրական ու ծովային գերիշխանությունը և պահպանեց Հոլանդիայից ու Ֆրանսիայից զավթած գաղութների ու ծովային հենակետերի մի մասը[102]:

Բելգիան միացվում է Հոլանդիային և ստեղծվում Ֆրանսիայից անկախ Նիդերլանդական թագավորություն[103]:

Հոդված 118. Այս հիմնական ակտին կցված պայմանագրեր, կոնվենցիաներ, հռչակագրեր, կանոնադրություններ և այլ առանձին ակտեր, մասնավորապես հետևյալը. 1. Տրակտատ Ռուսաստանի և Ավստրիայի միջև ապրիլի 21-ին 1815 թ., 2. Տրակտատ Ռուսաստանի և Պրուսիայի միջև ապրիլի 21-ին 1815 թ.: Ավստրիայի, Պրուսիայի և Ռուսաստանի միջև 1815 թվականի ապրիլի 21-ին (մայիսի 3) Կրակով քաղաքի վերաբերյալ լրացուցիչ տրակտատը, որը պետք է համարել Կոնգրեսի ընդհանուր որոշումների բաղկացուցիչ մասեր[104]:

---

99 ИСТОРИЯ РОССИИ, Мультимедиа-учебник, Заключительный акт Венского конгресса (1815 г.),2017: http://history.ru/

100 Зак Л.А., նշվ. աշխ., էջ 291-292:

101 Дебидур А., նշվ. աշխ., էջ 94:

102 Նույն տեղում, էջ 132:

103 Зак Л.А., նշվ. աշխ., էջ 291:

104 ИСТОРИЯ РОССИИ, Мультимедиа-учебник, Заключительный акт Венского конгресса (1815 г.),2017: http://history.ru/

Հոդված 120. Թեև այս ակտի բոլոր ցուցակներում օգտագործվում է միայն ֆրանսերենը, այն տերությունները, որոնք մասնակցել են այս ակտի մշակմանը, ընդունում են, որ դա չպետք է լինի ապագայի կանոնը, որ այսուհետ յուրաքանչյուր տերություն կօգտագործի նույն լեզուն բանակցությունների և կարգավորման համար պայմանները, որը մենք մինչ այժմ օգտագործել ենք դիվանագիտական հարցերում, և որ այս ակտը չի դիտարկվի որպես նախկին սովորությունների փոփոխության վկայություն[105]:

Հոդված 121. Այս ակտը կվավերացվի և դրա վավերագրերը կփոխանակվեն բոլոր մյուս տերությունների կողմից վեց ամսից, իսկ Պորտուգալիայի կողմից մեկ տարի հետո, կամ գուցե ավելի շուտ[106]:

Այսպիսով, Վիեննայի վեհաժողովի եզրափակիչ ակտը վերագծեց մի շարք եվրոպական պետությունների սահմանները և շոշափեց նոր պետությունների և միությունների ձևավորման բազմաթիվ հարցեր: Համագումարում զգալի ուշադրություն է դարձվել ազատ քաղաքների ձևավորմանը և պաշտոնապես հաստատվել է մշտական չեզոքության, դիվանագիտական էթիկետի և դիվանագիտական արձանագրության կարգավիճակը, ինչը օգնեց կանխել պետությունների ներկայացուցիչների միջև վեճերը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կատարված ուսումնասիրությունը կարելի է եզրակացնել, որ Վիեննայի վեհաժողովը կարևոր դեր խաղաց եվրոպական քաղաքական համակարգում: Դեռևս նախքան Վիեննայի վեհաժողովը Նապոլեոնյան պատերազմների ժամանակ Ֆրանսիայի կայսրը միացյալ Եվրոպա ստեղծելու փորձ կատարեց, սակայն այդ փորձը անհաջող էր գաղափարական պատճառներով, ինչպես նաև եվրոպական պետությունների նկատմամբ Ֆրանսիական գերիշխանության հաստատման և ուժերի հավասարակշռության բացակայության պատճառով: Նապոլեոն Բոնապարտի կայսրությունը ջախջախվեց IV հակաֆրանսիական կոալիցիայի ջանքերով և ֆրանսիական գահը վերադարձվեց Լուի XVIII-ին: Հաղթող տերությունները պետք է Եվրոպայում գտնեին կազմակերպման նոր ձև, որը կապահովի ուժերի հավասարակշռությունը, ընդհանուր շահերի գերակայությունը և սուր խնդիրների հավաքական կարգավորումը, ինչպես նաև կլուծեր հետնապոլեոնյան մայրցամաքի տարածքային վերակառուցման խնդիրը: Վերոհիշյալ հարցերի լուծման անհրաժեշտությունից ելնելով Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայում գումարվեց վեհաժողով: Վեհաժողովը բավականին ներկայացուցչական էր: Այն նախագահում էր Ավստրիայի կանցլեր Մետերնիխը:

105 Նույն տեղում:

106 Նույն տեղում:

Քննարկված բոլոր հարցերի մեջ ամենաբարդը տարածքային խնդիրն էր և, առաջին հերթին, լեհ-սաքսոնական հարցը, որը դարձավ դաշնակիցների պառակտման հիմնական պատճառը: Սակայն Նապոլեոն Բոնապարտի Էլբա կղզուց փախուստը և նոր պատերազմի սկիզբը ստիպեց Վիեննայի կոնգրեսի բոլոր մասնակիցներին մոռանալ նախկին տարաձայնությունները, գնալ փոխզիջումների և ստորագրել Վիեննայի վեհաժողովի եզրափակիչ ակտը: Վիեննայի վեհաժողովը իր ժամանակի համար եզակի երևույթ դարձավ միջազգային հարաբերությունների պատմության մեջ: Երկարատև դիվանագիտական մարտերի ընթացքում մշակվել է պայմանագրերի համակարգ, որը կարգավորում էր միջազգային հարաբերությունները և ապահովում նոր սահմաններ Եվրոպայում: Պարտված Ֆրանսիայի ճակատագրի գլխավոր դերակատարներից մեկը Ալեքսանդր I-ն էր, ով իր զորքերի գլխավորությամբ 1814 թվականի գարնանը մտավ Փարիզ: Ռուսաստանը դիվանագիտական կոնգրեսում խաղացել է եվրոպական մայրցամաքում գերակշռող պետության դերը և ակտիվորեն մասնակցել միջազգային խնդիրների լուծմանը: Վիեննայի վեհաժողովը նախադեպ ստեղծեց միջազգային կոնֆերանսների կանոնավոր գումարման համար, որտեղ պետությունների ներկայացուցիչները հնարավորություն ունեցան քննարկելու և լուծելու արտաքին քաղաքական խնդիրները: Վեհաժողովի բոլոր որոշումները հավաքագրվել են եզրափակիչ ակտում: Վիեննայի վեհաժողովում ընդունված եզրափակիչ ակտի հոդվածներն արտացոլեցին Եվրոպայի տերությունների միջև ձևավորված ուժերի հարաբերակցությունը, այն ավարտեց ու հանրագումարի բերեց շուրջ քառորդ դար անընդմեջ շարունակվող պատերազմների արդյունքը: Եվրոպայում վերջապես հաստատվեց խաղաղություն, որն ավելի ճիշտ կլինի անվանել երկարատև զինադադար: Վիեննայի վեհաժողովը վերագծեց մի շարք եվրոպական պետությունների սահմանները, շոշափեց նոր պետությունների և միությունների, ազատ քաղաքների ձևավորման բազմաթիվ հարցեր: Վիեննայի համակարգի նորմերն ու կանոնները նախատեսում էին մեծ տերությունների փոխադարձ խորհրդակցություններ հակամարտության դեպքում, կոլեկտիվ միջամտության հնարավորություն այն երկրների գործերին, որոնց սպառնում էր հեղափոխությունը: Պաշտոնապես հաստատվեցին դիվանագիտական վարվելակարգը և դիվանագիտական արձանագրությունը, ինչը օգնեց կանխել վեճերը պետությունների ներկայացուցիչների միջև: Վիեննայի համակարգը ստացավ իր վերջնական տեսքը Սրբազան դաշինքի ստեղծման ակտի ստորագրմամբ:

Ամփոփելով՝ կարելի է նշել, որ Վիեննայի համակարգը իր ժամանակի համար եզակի երևույթ դարձավ միջազգային հարաբերությունների պատմության մեջ: Առաջին անգամ փորձ արվեց պահպանել կայուն խաղաղություն մայրցամաքում, ոչ թե

պարզապես ուժերի հավասարակշռության հիման վրա, այլ ստեղծելով մի ամբողջ կուռ համակարգ, որը հիմնված էր կանոնավոր միջազգային կոնֆերանսների, համաժողովների և վեհաժողովների գումարման վրա: Դա տեղի ունեցավ ֆրանսիական հեղափոխության գաղափարներից հետկանգնելու, ինչպես նաև Ռուսաստանի և անձամբ Ալեքսանդր I-ի ազդեցության պայմաններում, ով առաջատար դեր էր խաղում Վիեննայում: Հետագայում Վիեննայի համակարգը փլուզվեց նոր ազատական ուժերի ազդեցության ներքո, որոնք ի հայտ եկան Եվրոպայում 19-րդ դարի 30-40-ական թվականներին:

**Գրականություն**


Манфред А., Наполеон Бонапарт, Сухуми 1989, с. 511-515.
Всемирная история, т. III, М. 1999, с. 28.
История дипломатии, под. Ред. А. Лактынов, М., 2009, с.247
Եփրեմյան Տ., Վեստֆալյան համակարգը իբրև արդի եվրոպական քաղաքականության շրջադարձային հանգրվան, Երևան, 2015, էջ 37:
Манфред А.З., Великая Французская революция, М., 1969, стр.32:
История дипломатии/ под ред. В.П.Потемкина. М., Т.II. 1941. С. 123.
Протопопов А.С. История международных отношений и внешней политики России (1648-2010). М., 2012. С. 253.
Лависс Э., Рамбо А., История XIX века. М., Т.I.1938. С. 122.
Дегоев В.М. Внешняя политика России и международные системы: 1700-1918, М.,2004. С. 246-247.
Сергеев В., История Европы XIXв., т. II, М., 1925,. с. 125.
Молок А., Европа 1794-1815, М. 1949, с. 415:
Тарле Е., Наполеон, М. 1991, с. 11:
Тарсен Э. и др., Европа (от Наполеона до наших дней), М., 1959, с. 106.

История дипломатии, т. I, М. 1941, с. 375:
Новая история,под ред. Нарочницкого, указ соч., с. 204.
Новая история,под ред. Е.Е. Юровской,И.М. Кривогуза, М.А.Полтавского, Т,1, М., 1983, с.115.
Тарле Е.В.,Сочинения,Т.7,М.,1959,с.307.
Могилевский Н.А., Заграничный поход русской армии 1813–1814 годов. — М.: Академический проект, 2018, с.184-185.
Дебидур А., Дипломатическая история Европы, т. I, М. 1947, с.37.
Всемирная история, т. VI, М. 1959, с. 321.
Яковлева Г.В., Венский конгресс 1814 - 1815 гг. в российской прессе, воспоминаниях и переписке первой половины XIX века, Санкт-Петербург, 2009, с.25.
Борисов Ю.В. Шарль-Морис Талейран. М., 1989. С.393.
Васильева Н.Ю., Неаполитанская дилемма Венского конгресса// сб. 200 лет Венской системе: проект и практика европейской дипломатии. М.,2016. С.96: https://risa.ru/
Зак Л.А., Монархи против народа (Дипломатическая борьба на развалинах Наполеоновской империи). М., 1966. С. 38.
История внешней политики России (конец XVв., 1917г.) пержая половина XIX века, М. 1999, с. 118.
Соловьев С.М., Император Александр I. Политика, дипломатия. М., 2003. С. 57.
Хазин А.Л., Богданов С.В, Государственное управление. Электронный вестник, Выпуск № 40. Октябрь 2013, С.237.
М.-П. Рей,РОССИЯ И МИР В XIX ВЕКЕ,2017, С.38.
Մուրադյան Մ, Սինասյան Է., Ռուսաց դիվանագիտությունը միջազգային հարաբերությունների համակարգում (XVIII-XIX դդ.) նշվ. աշխ, էջ 215:
Спицын Е.Ю. Российская империя XVIII- начала XX века. М., 2015. С. 312.
Тарле Е.В. Талейран. М., 2011 С. 232.
Орлов А. С. И др., История России, М., 1997, с. 218.
Нарочницкий А.Л. Международные отношения европейских государств с 1794 по 1830 г., М., 1946.,С. 54.
Дмитрий Семушин, Польский вопрос: урок Венского конгресса для современной России,2015: https://topwar.ru/:
Новая история, т. I, М. 1986, с. 320.
ИСТОРИЯ РОССИИ, Мультимедиа-учебник, Заключительный акт Венского конгресса (1815 г.),2017: http://history.ru/